ԳՆԴԵՐԷՑՆԵՐԻ[1] ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿՈՒՄ

Տ. ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՍՐԵԱՆ
monk-deacon@mail.ru

ՄՈՒՏՔ

Չնայած արդի աշխարհում ռազմական ուժի հզօրութիւնը սերտօրէն պայմանաւորուած է գերժամանակակից ու կատարելագործուած ռազմաարհեստագիտութեամբ ու սպառազինութեան յագեցուածութեամբ, այդուհանդերձ մարդկային գործօնը՝ հոգեւոր, հոգեբանական եւ բարոյական դրսեւորումներով, շարունակում է չկորցնել իր առանցքային նշանակութիւնը: Եւ դա է այն հիմնական պատճառներից մէկը, որ այսօր էլ աշխարհի քրիստոնեայ շատ երկրներում (ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, Միացեալ Թագաւորութիւն, Յունաստան, Չեխիա, Դանիա եւն.) գործում է բանակային հոգեւորականների համակարգը: Անգամ ոչ-քրիստոնեայ որոշ պետութիւնների բանակներում լայն գործունէութիւն են ծաւալում երկրի պաշտօնական կրօնի գործիչները (մասնաւորապէս, Իսրայէլի բանակում կրօնաւորների դերն ամենաբարձր մակարդակի վրայ է դրուած):

Բանակում հոգեւորականների ներկայութիւնն ու իրաւունքներն ամրագրուած են միջազգային իրաւական փաստաթղթերով եւս: Օրինակ՝ Ժընեւեան Երրորդ համաժողովի Դ. գլուխի 33րդ յօդուածը, ներկայացնում է գերեվարուած բանակային հոգեւորականի կարգավիճակն ու իրաւունքները, մասնաւորապէս՝ հոգեւորականը չի համարւում ռազմագերի, եւ կարող է շարունակել իր հոգեւոր գործունէութիւնը ռազմագերիների շրջանում[2]:

Հոգեւոր ծառայութիւն ունենալու տեսակէտից բացառութիւն չէ նաեւ հայկական բանակը, որտեղ 1997ից պետականօրէն հաստատուած ծրագրով հոգեւոր սպասաւորութիւն են իրականացնում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւորականները:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայ Եկեղեցին յընթացս պատմութեան, միշտ էլ կանգնած է եղել հայրենիքի պաշտպանութեանը զինուորագրուած հայորդիների կողքին, խօսքով ու գործով ոգեշնչել եւ ցուցաբերել հոգեւոր ու նիւթական աջակցութիւն, պետականութեան կորստի պայմաններում ստանձնել առաջնորդի դեր եւ յաճախ ազգային-ազատագրական պայքարի գլուխ կանգնել: Հայ Եկեղեցու հայրապետերը եւ հոգեւորականները վճռական ճակատամարտերից առաջ օրհնել են հայոց զօրքերը, յաճախ ներկայ գտնուել, նոյնիսկ մասնակցել մարտական գործողութիւններին, հայ ժողովրդին տարատեսակ օտար լծերից ազատելու դիւանագիտական եւ զինեալ պայքար մղել (յիշենք Ներսէս Մեծ Պարթեւ, Յովսէփ Հողոցմեցի, Յովհան Մանդակունի,

Յակոբ Ջուղայեցի, Եսայի Հասան-Ջալալեան, Ներսէս Աշտարակեցի, Գարեգին Յովսէփեանց կաթողիկոսների անունները):

Դեռեւս 338ին, երբ երկիր ներխուժած թշնամիների դէմ պայքարում զոհուեցին սպարապետ Վաչէ Մամիկոնեանն ու նրա զինակիցները, Վըրթանէս կաթողիկոսը կանոններ սահմանեց, ըստ որոնց սուրբ նահատակներ հռչակուեցին հայրենիքի պաշտպանութեան համար զոհուած հայորդիները[3]: Իսկ արդէն 451ին Հայ Եկեղեցու հոգեւոր դասը դարձաւ Վարդանանց պատերազմի ոգին ու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» կարգախօսով զինուորագրուած հայ ժողովրդի հետ դուրս եկաւ Աւարայր՝ հայ զինուորի ու զօրավարի հետ կողք-կողքի մարտնչելով ընդդէմ թշնամու: Ուշագրաւ է այն միտքը, որ Աւարայրի ճակատամարտի նախօրէին հայոց զօրքին ուղղուած իր ոգեշնչող խօսքում արտայայտում է առայսօր ռազմիկ հոգեւորականի խորհրդանշան դարձած Ղեւոնդ Երէցը. «*Դուք բոլորդ գիտէք, որ առաջուայ ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թէպէտեւ սովորութիւն ունէիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ յանձնելով նրանց աղօթքին, որեւէ ամուր տեղ էիք թողնում նրանց. իսկ այսօր եպիսկոպոսները եւ երէցներն ու սարկաւագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամէն մէկը... սպառազինուած եւ պատերազմի պատրաստուած՝ կամենում են ձեզ հետ միասին յարձակուել ու ջարդել ճշմարտութեան թշնամիներին*»[4]: Ռազմական գործողութիւններին հոգեւորականների անմիջական մասնակցութեան այս օրինակը թերեւս նախադէպ է ոչ միայն հայ, այլեւ համաքրիստոնէական իրականութեան մէջ:

Այս ոգին ու մղումը ուղենիշ եղան հայ հոգեւորականութեանը դարերի ընթացքում մինչ այսօր: Դրա ակնառու օրինակներից է Ցեղասպանութիւնից մազապուրծ հայ ժողովրդի կենաց-մահու օրհասական պայքարում 1918ի մայիսեան հերոսամարտերին հայ հոգեւորականութեան ուղղակի մասնակցութիւնն ու յաղթանակների կերտմանը բերած հսկայական աւանդը: Գէորգ Ե. Սուրէնեանց կաթողիկոսի տնօրինութեամբ Հայ Եկեղեցին ոչ միայն նիւթական հսկայ աջակցութիւն էր ցուցաբերում նորակազմ հայոց բանակին, այլեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, անգամ բարձրաստիճան հոգեւորականներ կամաւոր մեկնեցին ռազմաճակատ՝ ոգեւորելու հայ մարտիկներին, եւ նրանց հետ կողք-կողքի մասնակցեցին Սարդարապատի եւ միւս ճակատամարտերին[5]: 1918ին վերականգնուած հայոց անկախ պետականութեան՝ բանակի շարքերում հայ հոգեւորականն ունեցաւ իր անելիքն ու պարտականութիւնը. հայկական բոլոր գնդերն ունէին իրենց կցուած քահանաներ, որոնք, իդէպ, ամսական աշխատավարձ էին ստանում պետութիւնից[6]:

Հայ Եկեղեցին իր նշանակալից դերն ունեցաւ նաեւ արցախեան ազատամարտի տարիներին: Երջանկայիշատակ Վազգէն Ա. կաթողիկոսի տնօրինութեամբ վերաբացուած Արցախի թեմի հոգեւորականներն առա-

ջին իսկ օրերից աջակից եւ զինակից եղան հայ ազատամարտիկներին եւ հնարաւոր բոլոր միջոցներով նպաստեցին արցախահայութեան գոյամարտի յաղթանակին: Պատերազմում հոգեւորականութիւնը նոյնպէս ունեցաւ անդառնալի կորուստներ. զոհուեցին Վահան վարդապետ Դաւթեանը, Ռաֆայէլ սարկաւագ Խաչատրեանը եւ դպիր Արմէն Թովմասեանը[7]:

ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ

Նորագոյն շրջանի հայկական զինուժը, ծնունդ առնելով արցախեան գոյամարտում եւ կամաւորական ջոկատներից վերածուելով կանոնաւոր բանակի, փառահեղ յաղթանակներ տարաւ եւ արժանիօրէն վաստակեց քանիցս հնչած «տարածաշրջանի ամենամարտունակ բանակ» գնահատականը: Հրադադարի հաստատումից յետոյ էլ բանակաշինութեան ընթացքը չդադարեց, այլ զարգացաւ. մեծ թափով սկսուեցին աշխատանքներ տարուել մարտունակութեան եւ կարգապահութեան բարձրացման, բարոյահոգեբանական վիճակի կայունացման ուղղութեամբ: Եւ այստեղ էլ մեծ անելիք ունէր Հայ Առաքելական Եկեղեցին: Այդ իրողութեան քաջ գիտակցութեամբ 1997 Նոյեմբերի 13ին Գարեգին Ա. կաթողիկոսի եւ ՀՀ պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանի համատեղ նախաձեռնութեամբ հիմք դրուեց ՀՀ Զինուած Ուժերի Հոգեւոր Առաջնորդութեանը: ԶՈՒ հոգեւոր սպասաւորների գործունէութիւնը կանոնակարգելու եւ վերահսկելու նպատակով նշանակուեց ծառայութեան պատասխանատու՝ Վրթանէս վարդապետ Աբրահամեանը[8]:

ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդութեան ստեղծումից յետոյ առաջին ամենաանհրաժեշտ քայլերից մէկը ծառայութեան գործունէութեան կանոնադրութեան եւ ծրագրերի ստեղծումն էր: Իհարկէ, պատմութեան ընթացքում Եկեղեցու եւ բանակի յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած գրութիւններ եղել են՝ առաւելապէս զինուորականութեանն ուղղուած խրատական բնոյթի[9]: Կանոնակարգային տեսակէտից մեծագոյն նշանակութիւն ունեցող փաստաթուղթը 1918ին Երեւանի փոխթեմակալ Խորէն եպիսկոպոս Մուրադբէկեանի (1932-8՝ Խորէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոս) կազմած «Հրահանգ Զինուորական Քահանաների Համար» նախագիծն էր, որը նա նամակով ներկայացրել էր Գէորգ Ե. կաթողիկոսին՝ նշելով, որ հայկական գնդերի քահանաները դիմում են իրեն՝ խնդրելով հրահանգներ տարբեր հարցերի շուրջ: 10 կէտից բաղկացած նախագիծը հրահանգում էր, որ զինուորական քահանաները օրուայ որոշակի ժամերի պարտաւոր են լինել իրենց գնդի հետ, ազատ ժամերին դասախօսել Ս. Գրքից եւ ազգային-եկեղեցական աւանդութիւնից, վառ պահել զինուորների մէջ պարտքի գիտակցութիւնն ու սէրը ազգի եւ ազգային սրբութիւնների հանդէպ, սովորեցնել «Հայր Մեր»ը եւ երգել տալ օրը երեք անգամ, տօն եւ Կիրակի օրերին զինուորներին տանել եկեղեցի, մշտապէս լինել հոգեւորականի սքեմով ու առանց զէնքի եւն.[10]:

Սակայն ոչ առկայ պատմական վաւերագրերը, ոչ էլ արտասահմանեան երկրների փորձը բաւարար եղան, եւ երկու տարուայ աշխատանքներից յետոյ կազմուեց «Հոգեւոր Ծառայութեան Կանոնադրութիւն», որով յստակեցուեց ու կանոնակարգուեց բանակում հոգեւորականի գործունէութեան դաշտը, կառոյցը, խնդիրներն ու նպատակները: Կանոնադրութիւնը 14 Սեպտեմբերի 2000ին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ստորագրուեց եւ հաստատուեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի կողմից՝ դառնալով յետխորհրդային երկրներում իր տեսակի մէջ առաջին պաշտօնական փաստաթուղթը[11]: Յաւելենք, որ հոգեւորականի ներկայութիւնը բանակում վաւերացուեց նաեւ 2007ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունուած «Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Յարաբերութիւնների Մասին» օրէնքի 10րդ յօդուածով[12]:

Ըստ ընդունուած կանոնադրութեան՝ հոգեւոր ծառայութեան ղեկավարումն իրականացւում է Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնագրով եւ ՀՀ պաշտպանութեան նախարարի հրամանով նշանակուած հոգեւոր առաջնորդի կողմից՝ ըստ պաշտպանութեան նախարարի անձնակազմի հետ տարուող աշխատանքների (ԱՀՏԱ) գծով տեղակալի յանձարարականների: Հոգեւոր սպասաւորները նշանակւում են ՋՈՒ հոգեւոր առաջնորդի ներկայացմամբ, Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնագրով եւ ՀՀ ՊՆ ԱՀՏԱ գծով տեղակալի հրամանով: Բանակային գումարտակներում եւ զօրամասերում հոգեւոր սպասաւորները գործում են հոգեւոր առաջնորդի եւ պաշտպանութեան նախարարի համատեղ հաստատած ծրագրերով, իսկ ընթացիկ եւ կազմակերպական հարցերում առաջնորդւում են տուեալ զօրամիաւորման կամ զօրամասի հրամանատարի եւ ԱՀՏԱ գծով տեղակալների հետ համատեղ մշակած ծրագրերով:

Հոգեւոր ծառայութեան նպատակներն ու խնդիրներն են՝ ՋՈՒ անձնակազմին հաղորդակից դարձնել Քրիստոսի Աւետարանին եւ քրիստոնէական հաւատի սկզբունքներին՝ Հայաստանեայց Եկեղեցու դաւանանքի, եկեղեցական կանոնների եւ աւանդոյթների համաձայն դաստիարակել քրիստոնէական-բարոյական սկզբունքներով եւ ազգային-հայրենասիրական ոգով, ուսուցանել կրօնական, եկեղեցագիտական, ծիսական գիտելիքներ, պայքարել աղանդաւորական եւ այլ վնասակար ուսմունքների դէմ:

Հոգեւոր սպասաւորներն ազատուած են շարքային ծառայութիւնից եւ իրենց գործունէութիւնն իրականացնում են հոգեւորականի զգեստով:

ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Իր՝ երկու տասնամեակից աւել գոյութեան ընթացքում ՀՀ ՋՈՒ հոգեւոր առաջնորդութիւնը բաւականին նշանակալի ուղի է անցել՝ աստիճանաբար զարգանացնելով իր փորձառութիւնը եւ մեծացնելով արդիւնաւէտութիւնը: 1997ին բանակում սպասաւորելու մեկնեցին 8 հոգեւորականներ, իսկ այ-

սօր այդ թիւը շուրջ 70 է: Չնայած հոգեւոր սպասաւորութեան շրջանը պայմանականօրէն երկու տարի է, շատ հոգեւորականներ ինքնակամ երկարաձգում են իրենց ծառայութեան ժամկէտը, իսկ հոգեւորականների մի մասն արդէն բանակում նշանակուած է մշտական հիմունքներով:

Գնդերէցներն իրենց առաքելութիւնն են իրականացնում ռազմաուսումնական հաստատութիւններում, ՀՀ եւ Արցախի բանակային զօրամիաւորումներում եւ զօրամասերում, միջազգային խաղաղապահ առաքելութիւն իրականացնող ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումներում: Հոգեւորական է կցուած նաեւ Երկրապահ Կամաւորական Միութեանը: Ծառայութեան վայրում գնդերէցները քարոզ-դասախօսութիւններ են կարդում, անհատական զրոյցներ ունենում զինծառայողների հետ, կատարում հոգեւոր արարողութիւններ, կազմակերպում ուխտագնացութիւններ եւ զինուորներին տանում մօտակայ եկեղեցիներն ու սրբավայրերը, կազմակերպում հանդիսութիւններ եւ հոգեւոր, հայրենասիրական կամ գիտական բովանդակութեան ֆիլմերի դիտումներ, այցելում մարտական դիրքեր, բուժկէտեր, հիւանդանոցներ եւ կարգապահական վաշտ, տարածում կրօնական եւ հայրենասիրական բնոյթի գրականութիւն եւն.: Հոգեւոր սպասաւորների առաջնահերթ ուշադրութեան կենտրոնում են յատկապէս խնդիրներ ունեցող, մասնաւորապէս՝ ինքնախեղման կամ ինքնասպանութեան անգամ ամենաչնչին հակումներ ցուցաբերած զինծառայողները:

Հոգեւորականները իրենց նպաստն են բերում բանակի համապատասխան բաժինների կողմից զօրամասեր ուղարկուող քարոզչական, տեղեկատուական եւ վերլուծական նիւթերի ստեղծմանը, թղթակցում են բանակային մամուլին: Համացանցում www.armchaplain.com հասցէով գործում է ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդութեան պաշտօնական կայքէջը, նաեւ՝ ֆէյսպուքեան պաշտօնական էջն ու Եութիուպի պաշտօնական ալիքը:

2010ին Գարեգին Բ. կաթողիկոսի օրհնութեամբ Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւնը հրատարակեց զինծառայողների համար նախատեսուած Նոր Կտակարաններ (ներառեալ Սաղմոսաց Գիրքը), եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդի ձեռամբ բաժանուեց ՀՀ եւ Արցախի մարտական հերթապահութիւն իրականացնող գրեթէ բոլոր զօրամասերի զինծառայողներին: Յատուկ բանակի համար հրատարակուել են նաեւ աղօթագրքեր եւ բարոյախրատական ու հայրենասիրական բնոյթի գրականութիւն:

Այս տարիներին որոշ զօրամասերում կառուցուել են մատուռներ, նախատեսուած է նաեւ, որ մօտ ապագայում գրեթէ բոլոր զօրամասերն ունենան իրենց եկեղեցիները, որոնց նախագիծն արդէն հաստատուած է:

ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդութիւնը սերտօրէն գործակցում է քրիստոնէական մի շարք երկրների՝ Միացեալ Թագաւորութեան, Ֆրանսիայի, Յունաստանի եւ այլոց նման ծրագրերի հետ: Փորձի եւ տեղեկատուութեան փոխանակման, արդիւնաւէտ գործակցութեան նպատակներով բազմիցս ամենաբարձր մակարդակներով եղել են փոխադարձ այցելու-

թիւններ, համատեղ մասնակցութիւններ միջազգային համաժողովների եւ գիտաժողովների, դասախօսութիւններ եւ համատեղ քննարկումներ:

21 Սեպտեմբերի 2011ին՝ ՀՀ անկախութեան 20ամեայ յոբելեանի առիթով կազմակերպուած զօրահանդէսին, տեղի ունեցաւ աննախադէպ երեւոյթ՝ ՀՈՒ հոգեւոր սպասաւորներն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններն առանձին շարասիւնով մասնակցեցին զինուորական շքերթին: Հոգեւորականների՝ առանձին խմբով մասնակցութիւնը զինուորական շքերթին բացառիկ երեւոյթ էր ոչ միայն հայոց բանակի համար, այլեւ ամբողջ աշխարհի, քանի որ առաջին անգամ էր կատարւում նման ձեւով մասնակցութիւն: Հոգեւորականները շքերթին մասնակցեցին ՀՀ ՀՈՒ հոգեւոր առաջնորդութեան մարտական դրօշով, որի վրայ ասեղնագործուած է. «Օրհնեալ է մեր ուղին, զի Աստուած ընդ մեզ է»[13]: Հոգեւորականների մասնակցութիւնը զօրահանդէսին դարձաւ աւանդոյթ. նմանատիպ մասնակցութիւններ եղան 2016ին Երեւանում եւ 2018ին Սարդարապատում տեղի ունեցած զօրահանդէսներին:

29 Յունուարի 2012ին հայոց բանակի վերակազմաւորման 20ամեակի առիթով Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով Աշոտ Բ. Երկաթ թագաւորի խաչը («Սուրբ Նշան») յայտարարուեց հայոց բանակի պահապան ու հովանաւոր: Սրբագործ Խաչի կրկնօրինակը, որի կենտրոնում ամփոփուած է Քրիստոսի Խաչափայտի մի մասունք, օծուեց ու յանձնուեց ՀՈՒ հոգեւոր առաջնորդութեանը: Այնուհետեւ ՀՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանէս սրբազանը նախաձեռնեց այցելութիւն ՀՀ եւ Արցախի մարտական դիրքեր՝ Խաչի նշանով օրհնելու հայոց երկրի սահմանները եւ գօտեպնդելու հայրենեաց պաշտպաններին: Իսկ արդէն նոյն թուականի Մայիսի 9ին հայոց բանակի պահապան Խաչն Արցախում էր, եւ մայիսեան եռատօնի առիթով Ստեփանակերտում կազմակերպուած զօրահանդէսի ժամանակ հանդիսաւոր կերպով անց կացուեց զօրքերի առջեւով: Այժմ Ս. Խաչը պահւում է ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնում: 2018ին նոյն խաչի տեսքով պատրաստուեցին կրծքանշաններ եւ բաշխուեցին հայոց բանակի բոլոր սպաներին ու զինուորներին:

Գնդերէցների գործունէութեան արդիւնաւէտութիւնն առաւել բարձացնելու նպատակով վերջին տարիներին զօրամասերի հասարակական կամաւորների թուին աւելացուել է եւ հոգեւոր կամաւորներինը (ինչը նոյնպէս բացառիկ երեւոյթ է): Ստորաբաժանումներից ինքնակամ առաջադրուած որոշակի թուով զինուորներ դառնում են գնդերէցի իւրայատուկ օգնականները՝ բնականաբար շարունակելով լիարժէք իրականացնել իրենց առօրեայ ծառայողական պարտականութիւնները: Սա զգալիօրէն դիւրացնում է գնդերէցիի եւ զինուորների միջեւ փոխվստահութեան մթնոլորտի ամրապնդումը եւ մեծացնում օգնութեան կարիք ունեցող զինուորների յայտնաբերման եւ անհրաժեշտ օգնութեան ցուցաբերման հաւանականութիւնը:

Բանակային հոգեւորականի եւ զինծառայողների միջեւ փոխյարաբերութիւններն իրականանում են բացառապէս վերջիններիս կամաւորութեան եւ համաձայնութեան պայմաններում: Հոգեւորականը չի պարտադրում իր ներկայութիւնն ու ծառայութիւններն այն զինծառայողներին, ովքեր դրա կարիքը կամ ցանկութիւնը չունեն: Զանգուածային միջոցառումների ժամանակ, ինչիպիսին է օրինակ մարտական հերթափոխի մեկնելուց առաջ աղօթքը, այլադաւան կամ աթէիստ զինծառայողները պարտաւորուածութիւն չունեն անմիջական մասնակցութիւն բերելու, օրինակ՝ աղօթելու, այլ պարզապէս, ելնելով գերակշիռ մեծամասնութիւն կազմող Հայ Եկեղեցու հետեւորդ ծառայակիցների կրօնական զգացումների նկատմամբ տարրական յարգանքից, ուղղակի կարող են լուռ ներկայութիւն ունենալ: Իսկ եթէ կայ հնարաւորութիւն եւ դա չի հակասում զինուորական կարգուկանոնին, գնդերէցն ինքն է առաջարկում հեռանալ այն զինծառայողներին, ովքեր ցանկութիւն չունեն ներկայ գտնուելու տուեալ միջոցառմանը: Միւս կողմից էլ, եթէ որեւէ զինծառայող ունի որեւէ խնդիր, որի լուծմանը կարող է օգնել հոգեւոր սպասաւորը, վերջինս առաջարկում է իր օգնութիւնը եւ փորձում լուծել խնդիրը՝ անկախ այն հանգամանքից, թէ ինչպիսի կրօնական հայեացքներ ունի տուեալ զինծառայողը: Աւելորդ չենք համարում նշել, որ ծառայութեան ընթացքում շատ զինծառայողներ վերանայում են իրենց կրօնական հայեացքները եւ ինքնակամ փոխում վերաբերմունքը յօգուտ Հայ Եկեղեցու դաւանանքի:

ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդութիւնը վաղուց արդէն կայացած կառոյց է, որի անցած ճանապարհը եւ զարգացման ուժականութիւնը լիովին վստահութիւն են հաղորդում, որ ժամանակի հետ վերջնական լուծում կը ստանան նաեւ առկայ ընթացիկ խնդիրները (օրինակ՝ վերջնական անցումը մշտական հիմունքներով փորձառու բանակային հոգեւորականների ամբողջական կազմի): Նորանոր ձեռքբերումներն անշուշտ առաւել կը նպաստեն հայոց բանակի եւ հայկական պետականութեան հոգեւոր եւ ռազմական անվտանգութեան ամրապնդմանն ու զարգացմանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Որպէս բանակային հոգեւորականի համարժէք հայերէնում յաճախ մէկ բառով կիրառւում է կապելլանը (Հեղինէ Մկրտչեան, «Օտարահունչ Կապելլանը Հայոց Բանակում Կոչւում է Հոգեւոր Սպասաւոր», *Շողակն Արարատեան*, Երեւան, 2012:4(283)), որն ուղղակի փոխառութիւն է ռուսերէնից: Մինչեւ 2016ը բանակային հոգեւորականը պաշտօնական գրութիւններում անուանւում էր հոգեւոր սպասաւոր: 2016ին տողերիս հեղինակի կողմից առաջարկուեց գնդերէց եզրը: Առաջարկն ընդունուեց եւ տարածում գտաւ պաշտօնական մակարդակով:

[2] Մանրամասն տե՛ս՝ https://www.icrc.org/rus/resources/documents/misc/geneva-conventon-3.htm :

[3] Փաւստոս Բուզանդ, *Հայոց Պատմութիւն*, թարգմ. եւ ծանօթ.՝ Ստ. Մալխասեանց, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1987, էջ 46-47:

[4] Եղիշէ, *Վարդանի եւ Հայոց Պատերազմի Մասին*, թարգմ., ներած. եւ ծանօթ.՝ Երուանդ Տէր Մինասեան, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1971, էջ 109:

[5] Ս. Աֆանասեան, *Սարդարապատի Յաղթանակը. Հայաստան, Մայիս, 1918*, Երեւան, 1985, էջ 41. նաեւ՝ Յարութիւն Թուրշեան, *Սարդարապատի Հերոսամարտը*, Երեւան, 1965, էջ 129-130. նաեւ՝ *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, Գիրք Ե., Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետութեան Տարիներին (1918-1920 թթ.)*, կազմ. Ս. Բեհբութեան, Երեւան, «Ոսկան Երեւանցի» Հրատ., 1999, էջ 5, 15-16:

[6] *Հայաստանի Հանրապետութեան Պառլամենտի Օրէնքները (1918-1920 թթ.)*, կազմ.՝ Ս. Միրզոյեան, Մ. Աւետիսեան, Ջ. Յովհաննիսեան, Ա. Չիլինգարեան, Երեւան, 1998, էջ 69:

[7] Մանրամասն տե՛ս՝ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեան, Մ. Ա. Յարութիւնեան, «Արցախի Թեմը եւ Ադրբեջան-Ղարաբաղ Հակամարտութիւնը», *Հայկական Բանակ*, Երեւան, 2001, 1-2 (27-28), էջ 84-8:

[8] 1999 Դեկտեմբերին նրան փոխարինեց Արշէն աբեղայ Սանոսեանը, ում էլ յաջորդեց Նորայր աբեղայ Սիմոնեանը: Իսկ 2007 Հոկտեմբերից առայսօր ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդի պաշտօնը կրկին ստանձնել է Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը:

[9] Տե՛ս օրինակ՝ Ս. Ներսես Շնորհալի, *Թուղթ Ընդհանրական*, Երեւան, Գանձասար Հանդէս, 1991, էջ 114-6:

[10] *Վաւերագրեր*, էջ 73-4:

[11] Տե՛ս Արշէն աբեղայ Սանոսեան, «Բանակային Քահանաների Հաստատութիւնը ՀՀ Զինուած Ուժերում», *Հայկական Բանակ*, Երեւան, 2001, 1-2 (27-28), էջ 100:

[12] http://www.gov.am/u_files/file/kron/ekegheci.pdf :

[13] Դրօշի օրհնութիւնը կատարուել էր Մայր Տաճարում՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ, այն նոյն կանոնով, որով 1827ին օրհնուել էր հայ կամաւորական ջոկատների դրօշը Մկրտչեան:

THE SERVICE OF CLERICS IN THE ARMENIAN ARMY

(Summary)

FR. NERSES ASRYAN
monk-deacon@mail.ru

Having clerics in national armies is not unusual. In fact, the US, UK, French, Greek, Czeck, Danish and Norwegian armies have among their rank and file a number of clerics who provide spiritual guidance to all those who wish it. In fact, the presence of clerics in the army has been recognized internationally, and even their rights as POWs are clearly specified, particularly in the Third Geneva Convention.

The Armenian national army is not an exception in this regard. Clerical services were introduced in the Armenian army in 1997. Currently there are over 70 clerics who provide Christian guidance to the servicemen.

The author outlines the history of the inclusion of clerics in the national army of Armenia, the adoption of legislation which enabled their official presence there,and the socio-spiritual mission they carry out.